ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«12» օգոստոսի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Մ. Անանյան

ԳԲԽ-81/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Բարվա» ՍՊԸ-ի 29.07.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«Բարվա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 29.07.2016թ. ներկայացրած բողոքով «Բարվա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ ՀՀ Շիրակի մարզի Վահրամաբերդի համայնքապետարանի կողմից հակակարկտային կայանի ձեռքբերման նպատակով 22.07.2016թ. կազմակերպվել է «ՇՄՀՎ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով առանց

գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ, որը չեղյալ է հայտարարվել:

Այնուհետև, Պատվիրատուի կողմից 27.07.2016թ. կազմակերպվել է «ՇՄՀՎ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/2» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որով որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Բարվա» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմվել է թիվ 2 արձանագրությունը, որով «Բարվա» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է, քանի որ Ընկերության կողմից վճարման պահանջագիրը լրացված չի եղել Ընթացակարգի հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի» պահանջների համաձայն: Ընկերության կողմից ներկայացված վճարման պահանջագրում լրացված է եղել ներկայացման ամսաթիվը: Պատվիրատուն անհամապատասխանություն է համարել միայն վերը նշվածը:

Ընկերությունը որպես բողոքի հիմնավորում նշել է հետևյալ իրավական հիմքերը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված

պահանջներին, և, հրավերով սահմանված դեպքերում ու կարգով, գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նշել է, որ Ընկերության կողմից ներկայացված վճարման պահանջագրում լրացված է ներկայացման ամսաթիվ, հետևաբար նշված փաստաթուղթը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

«Բարվա» ՍՊԸ-ն նշել է, որ ընդամենը տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ, քանի որ սխալմամբ Ընկերությունը վճարման պահանջագրի մեջ նշել է տարեթիվը (2016թ.) և ամիսը (07):

Ըստ Ընկերության՝ Պատվիրատուն, մերժելով վերջինիս հայտը, գործել է ոչ իրավաչափ, քանի որ վերջինիս գործողությունները պետք է ուղղված լինեին համայնքի շահերի պահպանմանը, ինչպես նաև տնտեսական գործունեության բնականոն ընթացքի պահպանմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ «Բարվա» ՍՊԸ-ն խնդրել է չեղյալ հայտարարել «ՇՄՎՀ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/2» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրությամբ «Բարվա» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը և վերջինիս ճանաչել որպես Ընթացակարգի հաղթող մասնակից, ինչպես նաև կիրառել ժամանակավոր միջոց, այն է՝ կասեցնել նոր հայտարարված թիվ «ՇՄՎՀ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/3» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. հուլիսի 29-ի թիվ 1 որոշման իրականացումը:

2. <u>Վահրամաբերդի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>

Վահրամաբերդի համայնքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 04.08.2016թ. թիվ 33 գրությամբ «Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է, որ Պատվիրատուի կողմից հակակարկտային կայանի ձեռքբերման նպատակով

26.07.2016թ. կազմակերպված «ՇՄՀՎ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/2» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի հրավերը հաստատվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. հուլիսի 26-ի թիվ 1 որոշմամբ՝ ՀՀ օրենսդրության, «Գնումների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և հրապարակվել է www.gnumner.am համացանցային կայքում:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Բարվա» ՍՊԸ-ն և «Լոկատոր» ՓԲԸ-ն:

Հայտերի բացումը և գնահատումն իրականացվել է հայտերի բացման նիստում՝ 2016թ. հուլիսի 28-ին ժամը 15:00-ին, ՀՀ Շիրակի մարզի Վահրամաբերդ համայնքում, հասցե՝ գ. Վահրամաբերդ, փողոց 16, շենք 14:

«Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված վճարման պահանջագիրը լրացված չի եղել հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի» պահանջներին համաձայն, քանի որ լրացված է եղել ներկայացման ամսաթիվը:

Ընթացակարգի հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի» 2-րդ կետի համաձայն՝ վճարման պահանջագրի ներկայացման ամսաթիվը լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը:

«Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է անբավարար, որպես հրավերով սահմանված պայմաններին չհամապատասխանող հայտ և այն մերժվել է:

Գնահատող հանձնաժողովի կողմից «Լոկատոր» ՓԲԸ-ի ներկայացրած հայտը գնահատվել է անբավարար և հրավերով սահմանված պայմաններին չհամապատասխանելու հիմքով մերժվել է:

Արդյունքում, հիմք ընդունելով Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ Ընթացակարգը հայտարարվել է չկայացած: Ելնելով Վահրամաբերդի համայնքապետարանի կարիքների համար հակակարկտային կայանի ձեռքբերման հրատապության անհրաժեշտությունից 2016թ. հուլիսի 29-ին կազմակերպվել է նոր՝ «ՇՄՀՎ-

ԲԸԱՀԱՊՁԲ-16/3» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ, որով հայտերի բացման նիստի վերաբերյալ կազմված արձանագրությունը հրապարակվել է www.gnumner.am համացանցային կայքում:

3. <u>ԳԲԽ-81/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-81/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Շիրակի մարզի Վահրամաբերդի համայնքապետարանի կողմից հակակարկտային կայանի ձեռքբերման նպատակով 22.07.2016թ. կազմակերպվել է «ՇՄՀՎ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/2» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Բարվա» ՍՊԸ-ն և «Լոկատոր» ՓԲԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգ»-ի 2-րդ կետի համաձայն՝ «ներկայացման ամսաթիվը» դաշտը պարտադիր լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը:

3. «Բարվա» ՍՊԸ-ի Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտի թիվ 9 հավելվածով հայտի ապահովման վերաբերյալ տուժանքի մասին համաձայնության անբաժանելի մաս հանդիսացող վճարման պահանջագրի «ներկայացման ամսաթիվը» ***դաշտում լրացվել է պահանջագրի ներկայացման ամիսը (07) և տարեթիվը (2016թ.):***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 28.07.2016թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի N 2 արձանագրության 4-րդ կետով արձանագրվել է, որ «Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Վճարման պահանջագիրը» լրացված չէ հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգի» պահանջներին համապատասխան, քանի որ լրացվել է «ներկայացման ամսաթիվը»:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրության 5-րդ կետով որոշում է կայացրել մերժել «Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանելու հիմքով:

6. ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ ի դեմս ԳԲԽ-81/16 բողոքը քննող հանձնաժողովի, 04.08.2016թ. կայացրած որոշմամբ բավարարել է «Բարվա» ՍՊԸ-ի միջանկյալ ընթացակարգ կիրառելու վերաբերյալ պահանջը:

4. <u>ԳԲԽ-81/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Բարվա» ՍՊԸ-ի 29.07.2016թ. ներկայացրած բողոքը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, Վահրամաբերդի համայնքապետարանի 04.08.2016թ. թիվ 33 գրությունը, «ՇՄՀՎ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/2» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի հրավերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ընթացակարգի հրավերով սահմանվում է, որ «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգ»-ի 2-րդ կետի համաձայն՝ «ներկայացման ամսաթիվը» դաշտը ***<u>պարտադիր</u> լրացվում է շահառուի կողմից***՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը:

«Բարվա» ՍՊԸ-ի Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 9 հավելվածով՝ հայտի ապահովման վերաբերյալ տուժանքի մասին համաձայնության անբաժանելի մաս հանդիսացող «Վճարման պահանջագրում» ներկայացման ամսաթիվը նշելու կապակցությամբ հայտնում ենք, որ ըստ Ընթացակարգի հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգ»-ի 2-րդ կետի՝ վճարման պահանջագրում ***<u>ներկայացման ամսաթիվը պարտադիր լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը,</u>*** ուստի Ընկերությունը վճարման պահանջագրի «ներկայացման ամսաթիվը» ***դաշտում լրացնելով***

պահանջագրի ներկայացման ամիսը՝ 07 և տարեթիվը՝ 2016թ., խախտել է հրավերով սահմանված պահանջները:

Այսպիսով, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 28.07.2016թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի N 2 արձանագրության 5-րդ կետով որոշում է կայացրել մերժել «Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանելու հիմքով:

Այսպիսով, Կենտրոնը գտնում է, որ «Բարվա» ՍՊԸ-ի 29.07.2016թ. բողոքով ներկայացրած Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 28.07.2016թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի N 2 արձանագրության 5-րդ կետով «Բարվա» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու պահանջը հիմնավոր չէ և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Բարվա» ՍՊԸ-ի 29.07.2016թ. ներկայացրած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-81/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան